

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ա ՎԱՂԱՐՇՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ՝ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ՍԴՈՒ-1708  
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 138-րդ հոդվածի, ինչպես նաև այդ դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը և 2023 թվականի դեկտեմբերի 19-ին ընդունեց ՍԴՈՒ-1708 որոշումը (հրապարակվել է 2023 թվականի դեկտեմբերի 22-ին):

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2023 թվականի դեկտեմբերի 19-ի ՍԴՈՒ-1708 որոշմանը՝ ես՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ա. Վաղարշյանս, շարադրում եմ իմ հատուկ կարծիքը՝ որոշման եզրափակիչ մասի կետերի և դրանց հիմքում դրված պատճառաբանական մասերի վերաբերյալ:

**1. ՍԴՈՒ-1708 որոշման եզրափակիչ մասի 1-ին կետի վերաբերյալ**

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի (այսուհետև՝ Կանոնակարգ) 8-րդ հոդվածի («Խմբակցության լիազորությունները») 1-ին մասի 5-րդ կետը սահմանում է. *«1. Խմբակցությունն իրավունք ունի Կանոնակարգով սահմանված կարգով՝*

*(...)*

*5) մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոնում առաջադրելու թեկնածու»:*

Սահմանադրական դատարանի ՍԴՈՒ-1708 որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով վերը բերված իրավակարգավորմանը տրվել է մեկնաբանություն, ըստ որի՝ այդ իրավադրույթը *«համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա*

տեղակալի՝ իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելն իրավասու խմբակցության ոչ թե իրավունքն է, այլ պարտադիր լիազորությունը»:

Այսպիսի եզրակացության հիմքում դրվել է երկու պատճառաբանություն: **Առաջին՝** «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) շատ ընդհանրացված, առանց կոնկրետությունները հաշվի առնելու և ոչ միանշանակ, դրանց արդյունքում մեծապես բարոյախրատական բնույթի խորհրդատվությունը: **Երկրորդ** պատճառաբանությունը հետևյալն է. «Հանրային իշխանության մարմինների լիազորությունները բխում են վերջիններիս սահմանադրական գործառույթներից և ուղղված են դրանց իրականացմանը, հետևաբար՝ հանրային իշխանության մարմինների գործառույթների իրականացման ապահովմանն ուղղված լիազորությունները չեն կարող մեկնաբանվել այնպես, որ խաթարվի բուն սահմանադրական գործառույթի էությունն ու դրա կենսագործման նպատակը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հանրային իշխանության մարմնի սահմանադրական գործառույթի կենսագործումը չի կարող կախված լինել հանրային իշխանության որևէ մարմնի բացարձակ հայեցողությունից: Անգամ այն դեպքերում, երբ օրենսդրական ձևակերպումներն այնպիսին են, որ հանրային իշխանության մարմնին օրենքով վերապահված լիազորությունները կարող են մեկնաբանվել որպես հայեցողական, դրանք պետք է ընկալվեն որպես համապատասխան մարմնի սահմանադրական գործառույթների և առաքելության իրականացման նպատակով իրացվող պարտադիր լիազորություններ և իրացվեն այդ մարմնի սահմանադրական գործառույթների ոգուն համահունչ»:

Այսպիսի կոշտ մեկնաբանությունը հնարավոր է, որ ընդունելի լիներ ցանկացած այլ պետական մարմնի համար, բայց ոչ Ազգային ժողովի, որի կազմակերպման հիմքում դրված է ժողովրդի քաղաքական ներկայացուցչության սկզբունքը, որը ենթադրում է նաև քաղաքական առճակատում, ինչը խորհրդարանի՝ որպես ժողովրդի ներկայացուցչական մարմնի ու քաղաքական կուսակցությունների՝ իշխանություն-ընդդիմություն հիմունքներով կազմակերպված լինելու պարագայում **«նույնպես բնականոն և երբեմն անհրաժեշտ երևույթ է»:** Այդ առճակատման մեջ արտահայտվում է նաև ժողովրդի ընտրաձայների բազմազանությունը, հետևաբար՝ առճակատման կողմերի վարքագիծը

պայմանավորված է ժողովրդի համապատասխան հատվածի քվեով, իսկ կողմերի վարքագծի գնահատողն ինքը՝ ժողովուրդն է: Բախման լուծման միջոցը նոր ընտրություններն են կամ խորհրդարանի գործունեության անընդհատությունն ապահովող Սահմանադրությանը համապատասխան կառուցված ճկուն ընթացակարգերով իրավակարգավորումները:

Բացի հայեցակարգային հակասականությունից, «պարտադիր լիազորություն» հասկացությունը քննություն չի բռնում նաև ձևական իրավաբանական տրամաբանության դիրքերից: Անհասկանալի է, թե ինչու՞ է Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված տասնյակից ավելի իրավունքների շարքում այս մեկը համարվում պարտադիր, և ի՞նչ է պարտադիր իրավունքը:

**Վերը մատնանշված հայեցակարգային ու տրամաբանական հակասությունները բացառվում են այն դեպքում, երբ Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը տառացիորեն հասկացվում է որպես խմբակցության իրավունք, որը կարող է սահմանափակվել, մասնավորապես, իրավասու խմբակցության կողմից իրեն վերապահված մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար թեկնածու առաջադրելու իրավունքի իրականացումից հրաժարվելը, կամ առաջադրված թեկնածուների պարբերական հրաժարականը կարող է հանգեցնել Ազգային ժողովի խմբակցության այդ իրավունքի՝ Կանոնակարգով սահմանված սահմանափակման՝ մշտական հանձնաժողովի անխափան և անընդհատ գործունեության ապահովման համար:**

## **2. ՍԴՈ-1708 որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետի վերաբերյալ**

Կանոնակարգի 138-րդ հոդվածի 5-րդ սահմանում է, որ *«Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրման իրավունքը որոշելուց հետո խմբակցությունները կարող են փոխհամաձայնությամբ փոխանակել կամ միմյանց զիջել մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրենց իրավունքը»:*

Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1708 որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետով այդ իրավակարգավորումը *«այնքանով, որքանով նախատեսում է Ազգային*

ժողովի խմբակցությունների կողմից մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրման իրավունքը որոշելուց հետո փոխհամաձայնությամբ մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրենց իրավունքը **միմյանց զիջելու** հնարավորություն» ճանաչվել է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող:

Սահմանադրությունը, ելնելով Ազգային ժողովի մարմիններում խորհրդարանական փոքրամասնության պարտադիր ներկայացվածության սկզբունքից, այդ փոքրամասնության համար երաշխավորել է Ազգային ժողովի տեղակալներից մեկի ընտրությունն ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների թվից (104-րդ հոդված, 1-ին մաս), խորհրդարանի մշտական հանձնաժողովներում տեղերի բաշխումը խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ, ինչպես նաև մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխումը խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ (106-րդ հոդված, 2-րդ մաս):

Սահմանադրական այս իրավակարգավորումների տառացի բովանդակությունը հիմք ընդունելով՝ անհասկանալի է, թե ինչո՞ւ է հակասահմանադրական **մշտական հանձնաժողովների տեղակալների պաշտոններում** թեկնածուների առաջադրման իրավունքը որոշելուց հետո խմբակցությունների փոխհամաձայնությամբ մշտական հանձնաժողովի տեղակալի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրենց իրավունքը **միմյանց զիջելու** հնարավորությունը: Չէ որ Սահմանադրությունը մշտական հանձնաժողովների նախագահների տեղակալներին չի ներառել խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ խմբակցությունների միջև բաշխման կարգի շրջանակներում (106-րդ հոդված, 2-րդ մաս):

Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ» իրավակարգավորումը երաշխիք է, որ խմբակցությանը չզրկեն այդ հավակնությունից՝ մեծամասնության որոշմամբ: Սակայն խմբակցությունը՝ որպես խորհրդարանի հիմքա-

յին կառուցվածքային օղակ, պետք է ունենա իր ինքնավարությունից բխող մանևրելու լայն հնարավորություններ, ինչը ենթադրում է խորհրդարանական տարատեսակ պայմանավորվածություններ ու փոխհամաձայնություններ, որոնք բխում են կոալիցիաներ կազմելու կամ խորհրդարանական գործունեության ընթացքում համագործակցելու և այլ շահերից: Հետևաբար՝ Կանոնակարգը սահմանել է ճկուն իրավակարգավորում, որի հիմքում ընկած է խմբակցությունների կամավոր փոխհամաձայնությունը՝ հրաժարվել հանձնաժողովի նախագահի թեկնածու առաջադրելու իր իրավունքից՝ զիջելով այն մեկ այլ խմբակցության: Եթե այդ որոշումն ընդունում է ինքը՝ խմբակցությունը՝ կամավոր, առանց որևէ պարտադրանքի, ապա այն չի կարող համարվել հակասահմանադրական:

Փոխհամաձայնեցման հիմքով պաշտոնների հավակնորդների թեկնածուների առաջադրման իրավունքից հրաժարվելու կամ պաշտոնները միմյանց զիջելու կամ այլ տարբերակներով իրավակարգավորումները տարածված են համաշխարհային խորհրդարանական պրակտիկայում, որովհետև դրանք հնարավոր են դարձնում գտնել ճկուն, անհատականացված, հետևաբար՝ պատշաճ իրավիճակային լուծումներ: Այս համատեքստում Կանոնակարգի 138-րդ հոդվածի 5-րդ մասը չի կարող համարվել հակասահմանադրական, որովհետև, նախ՝ ի սկզբանե խմբակցության համար երաշխավորված է, ըստ առկա համամասնության, մշտական հանձնաժողովում տեղերի և դրանց նախագահների պաշտոնների տեղերի քանակը, ինչի պայմաններում հետագայում դրանք կամավոր ինչպես փոխանակելը, այնպես էլ զիջելը բնականոն են, հետևաբար՝ սահմանադրական, հատկապես ո՞ր խմբակցությունը ցանկացած պահի կարող է դուրս գալ կամ հրաժարվել փոխանակման կամ զիջման համաձայնագրից:

### **3. ՍԴՈ-1708 որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետի վերաբերյալ**

Կանոնակարգի 138-րդ հոդվածի 12-րդ մասը սահմանում է. «Եթե խմբակցությունը Կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետում մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրեն վերապահված թափուր պաշտոնում թեկնածու չի առաջադրում, ապա տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է

սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով խմբակցությունների գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը»:

Սահմանադրական դատարանն իր որոշմամբ այս իրավադրույթը ճանաչել է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող: Այս դիրքորոշման հիմքում դրվել է հետևյալ պատճառաբանությունը. «Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ օրենսդրական կարգավորումը համահունչ չէ Սահմանադրական դատարանի այն եզրահանգմանը, որի համաձայն՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելն իրավասու խմբակցության պարտադիր լիազորությունն է: Իրավասու խմբակցությունը չի կարող հրաժարվել մշտական հանձնաժողովի նախագահի, նրա տեղակալի՝ սահմանադրական պահանջի ուժով իրեն պատկանող համապատասխան պաշտոններում թեկնածուներ առաջադրելու պարտադիր լիազորությունից (խմբակցությունների միջև համապատասխան լիազորության փոխհամաձայնությամբ փոխանակման հնարավորությամբ):

(...)

(...) Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովի որևէ այլ խմբակցություն, այդ թվում՝ ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությունը, մեկ այլ խմբակցությանը վերապահված՝ մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոններում թեկնածուներ առաջադրելու լիազորության (Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ պարտադիր լիազորության) իրացման իրավասու սուբյեկտ չէ: Խնդրո առարկա հարաբերություններում Ազգային ժողովի իրավասու խմբակցությունն այն խմբակցությունն է, որին համամասն ներկայացվածության սահմանադրական սկզբունքով պաշտոնների բաշխմամբ ի սկզբանե վերապահված են մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնները, և իրավասու խմբակցության՝ նշված պաշտոններում թեկնածուներ առաջադրելու լիազորությունը պահպանվում է մինչև Ազգային ժողովի լիազորությունների ավարտը»:

Այս եզրակացությունը հակասական է հենց խնդրո առարկա որոշման եզրափակիչ մասի 1-ին կետի համատեքստում, որում ասված է, որ Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը «համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբա-

*նությամբ, որի համաձայն՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի՝ իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելն իրավասու խմբակցության ոչ թե իրավունքն է, այլ պարտադիր լիազորությունը»:*

Ստացվում է, որ ՍԴՌ-1708 որոշմամբ խմբակցության իրավունքը դիտարկվում է «պարտադիր լիազորություն», իսկ իրավաբանորեն պարտադրվող ցանկացած վարքագիծ պետք է ունենա ինչ-որ սանկցիոն հետևանք: Սակայն պետք է նկատի ունենալ, որ եթե Սահմանադրական դատարանը խմբակցության իրավունքը դիտարկել է «պարտադիր լիազորություն», ապա դա չի նշանակում, որ առճակատման գնացած խմբակցությունն իրականում անպայմանորեն կառաջադրի հանձնաժողովի նախագահի թեկնածու: Կանոնակարգի 138-րդ հոդվածի 12-րդ մասը հենց սանկցիոն հետևանք է, որը վրա է հասնում, երբ որ խմբակցությունը չարաշահմամբ չի իրացնում իր իրավունքը:

Արդյունքում՝ գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանն իրավասու խմբակցության փոխարեն մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրավասու խմբակցությանը վերապահված թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու հնարավորության ընձեռումը, որպես իրավակարգավորում, **հակասահմանադրական և անվավեր ճանաչելը պարտադիրությունը վերածում է բարոյախրատական կոչի:**

Մշտական հանձնաժողովներում տեղերը և դրանց նախագահների պաշտոնները թափուր լինելը կարող է պատճառ դառնալ խորհրդարանական կյանքում գործառնական բարդությունների, ճգնաժամերի ու փակուղիների առաջացման, իսկ դրանց արդյունքում խաթարել մշտական հանձնաժողովի և այլ մարմինների արդյունավետ աշխատանքը: Օրենսդրի կողմից սույն իրավակարգավորման ամրագրումը հետապնդում է խմբակցության կողմից մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրեն վերապահված թափուր պաշտոններում թեկնածուներ առաջադրելու իրավունքը չօգտագործելու հետևանքով խորհրդարանական կյանքում առաջացող իրավական փակուղին հաղթահարելու, մշտական հանձնաժողովի անխափան գործունեությունն ապահովելու նպատակ:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների գործառութային անընդհատության ապահովման համար Կանոնակարգը կարող է նախատեսել հանձնաժողովի

բնականոն գործունեության ապահովման համար նախատեսված ժամանակավոր կառուցակարգեր մինչև Սահմանադրությանը համապատասխանող ու դրանից բխող կանոնակարգային իրավադրույթներով սահմանված կարգով հանձնաժողովի նախագահի ընտրությունը, սակայն այդ կառուցակարգերը պետք է համապատասխանեն այդ հարաբերությունների կարգավորմանն ուղղված սահմանադրական իրավադրույթներին, այն է՝ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին:

Միաժամանակ վերոնշյալ իրավակարգավորումը սահմանադրականության տեսանկյունից գնահատելիս մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների վերաբերյալ իրավակարգավորումների նկատմամբ անհրաժեշտ է դրսևորել տարբերակված մոտեցումներ:

Համաձայն Կանոնակարգի 138-րդ հոդվածի 11-րդ մասի՝ Ազգային ժողովի **մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալն** ընտրվում է իրավասու խմբակցության ղեկավարի կամ քարտուղարի առաջադրմամբ՝ հանձնաժողովի որոշմամբ: Ըստ Կանոնակարգի 13-րդ հոդվածի 2-րդ մասի՝ մշտական հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնը թափուր լինելու դեպքում նրան փոխարինում է տեղակալը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հանձնաժողովի կողմից որոշված անդամը, հետևաբար՝ մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի կարգավիճակի առանձնահատկությունը կամ գործառությանին առաքելությունը նախագահի բացակայության ժամանակ վերջինիս փոխարինելն է:

Ի տարբերություն մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի՝ նրա տեղակալի պաշտոնը սահմանված չէ Սահմանադրությամբ: Այդ ինստիտուտը նախատեսված է միայն Կանոնակարգով, որը միաժամանակ այն ճանաչել է որպես խմբակցությունների միջև ըստ համամասնության բաշխվելիք պաշտոն, ինչը, որպես օրենսդրական լուծման տարբերակ, իր հիմքում չունի Սահմանադրությամբ պայմանավորված անհրաժեշտություն: Սակայն քանի որ Կանոնակարգն այդ պաշտոնի համար ևս սահմանել է մշտական հանձնաժողովների նախագահների համանմանությամբ խմբակցությունների միջև ըստ համամասնությունների բաշխման կարգ, ուրեմն՝ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 12-րդ մասի՝ հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնի զբաղեցման իրավակարգավորումները պետք է նախատեսեն, որ ամենամեծ գործա-



կիցն ունեցող խմբակցությունը պարտավոր է **առաջին հերթին** համապատասխան թեկնածուին առաջադրել այն իրավասու խմբակցությունից, որին ի սկզբանե վերապահվել է համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնը, և միայն այդ կարգով հանձնաժողովի նախագահի տեղակալի ընտրությունները չկայանալու դեպքում սահմանեն, որ առաջադրումն իրականացվում է այլ խմբակցությունների անդամների թվից:

Ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները և դրանք զբաղեցնելու կարգի հիմունքներն ուղղակիորեն (տառացի) ամրագրված են Սահմանադրությամբ, հետևաբար՝ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 12-րդ մասում նախատեսված իրավակարգավորումը՝ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի մասով, անպայմանորեն պետք է նախատեսի այնպիսի իրավակարգավորում, որը համահունչ է Սահմանադրությանը: Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանն առաջին հերթին կարող են փոխանցվել ոչ թե Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի համապատասխան թափուր տեղի նկատմամբ խմբակցության իրավունքները, այլ միայն տվյալ տեղի համար թեկնածու առաջադրելու իրավունքը: Սակայն հետագա գործընթացներում հնարավոր է Կանոնակարգով նախատեսել նաև մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի համապատասխան թափուր տեղի նկատմամբ խմբակցության իրավունքների ժամանակավոր փոխանցում այլ խմբակցությանը, եթե հանձնաժողովների նախագահների պաշտոնների թափուր մնալը կարող է առաջացնել համակարգային ու լուրջ խոչընդոտներ խորհրդարանի գործունեության համար:

Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասության ուժով մշտական հանձնաժողովի գործառությանն անընդհատության ապահովմանն ուղղված ցանկացած իրավակարգավորում պետք է նախատեսի, որ ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությունը **պարտավոր է առաջին հերթին համապատասխան թեկնածուին առաջադրել այն իրավասու խմբակցությունից**, որին Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասության ուժով ի սկզբանե վերապահված է համապատասխան մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը:

Վերը բերված հիմնավորումները հաստատում են, որ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 12-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ երբ իրավասու խմբակցությունը հրաժարվում է Կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետում մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրեն վերապահված թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելուց, ապա տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է խմբակցությունների գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը, որը պարտավոր է առաջադրումն իրականացնել այն խմբակցության համապատասխան ներկայացուցիչներից, որին ի սկզբանե վերապահված էր թեկնածու առաջադրելու իրավունքը: Եթե այս ընթացակարգով ևս հնարավոր չլինի ընտրել մշտական հանձնաժողովի նախագահ կամ տեղակալ, ապա Կանոնակարգը կարող է նախատեսել պահեստային կարգավորումներ, օրինակ՝ առաջադրման իրականացում նաև այլ խմբակցությունների պատգամավորների թվից: Նման կարգով ընտրված նախագահը կարող է պաշտոնավարել մինչև այն պահը, երբ իրավասու խմբակցությունը, դադարեցնելով առճակատումը, կորոշի անցնել կառուցողական հարթություն և առաջադրել համապատասխան թեկնածու:

#### **4. Կանոնակարգի 138-րդ հոդվածով նախատեսված՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոն(ներ)ում ընտրական կարգի մասին**

Դիմողը բարձրացնում է հետևյալ հարցադրումները.

«1. Ո՞րն է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «Մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:» նորմերի սահմանադրաիրավական բովանդակությունը, արդյո՞ք հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովում որևէ այլ պաշտոնը (ներառյալ՝ հանձնաժողովի նախա-

գահի տեղակալի պաշտոնը) ներառվում է խմբակցությանը հասանելիք տեղերի թվաքանակի մեջ:

2. Արդյո՞ք Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոն(ներ)ում թեկնածուներ առաջադրելու և այդ պաշտոն(ներ)ում ընտրությունների անցկացման՝ Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ինչպես նաև 138-րդ հոդվածով սահմանված ընթացակարգերը ոչ իրավաչափ կերպով չեն սահմանափակում Ազգային ժողովի քաղաքական փոքրամասնության, առավելապես ընդդիմադիր խմբակցության իրավունքները: Այսինքն՝ Ազգային ժողովի քաղաքական փոքրամասնությունը կազմող խմբակցությունը (հիմնականում ընդդիմադիր խմբակցությունը) լրացուցիչ կախվածության մեջ է ընկնում կառավարող խմբակցությունից սահմանադրի կողմից իրեն վերապահված իրավունքն իրացնելիս»:

Դիմողը պնդում է. «(...) Տերմինաբանության տեսանկյունից Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունը օգտագործում է **«պաշտոնները բաշխվում են» տերմինները**, մինչդեռ վիճարկվող դրույթը և դրա հետ փոխկապակցված դրույթները կիրառում են **«թեկնածու առաջադրելու իրավունք» տերմինները**, որոնք ոչ միայն չեն համապատասխանում միմյանց, այլև **«թեկնածու առաջադրելու իրավունք» տերմինն** ինքնին սահմանափակում և աղավաղում է **«պաշտոնները բաշխվում են» տերմինը, քանի որ պաշտոնների բաշխումը ենթադրում է խմբակցության որոշման հիման վրա նշանակում, որը կախված չէ կառավարող խմբակցության կամքից, մինչդեռ (...) «թեկնածու առաջադրելու իրավունք»-ը տրամագծորեն հակառակն է»:**

Դիմողի կողմից բարձրացված՝ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասում առկա «տեղերը բաշխվում են» և Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «իրեն վերապահված պաշտոնում առաջադրելու թեկնածու», ինչպես նաև 138-րդ հոդվածի «մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրությունները» իրավական ձևակերպումների բովանդակության ու դրանց հարաբերակցության պարզաբանման համար իրականացված համակարգագործառությանի նախնական մեկնաբանությունը ցույց է տալիս, որ խորհրդարանական ընտրու-

թյուններից հետո օրենսդիր մարմնի բնականոն գործունեության ապահովման համար, առաջին հերթին, ձևավորվում են Ազգային ժողովի՝ Սահմանադրությամբ սահմանված մարմինները, ներառյալ՝ մշտական հանձնաժողովները, ընդ որում՝ **վերջիններիս կազմավորումն ունի եռափուլ ընթացակարգ**, որի իրականացման իրավական հիմունքները սահմանված են Սահմանադրությամբ, իսկ մանրամասները՝ Կանոնակարգով:

Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավակարգավորումը, համաձայն որի՝ մշտական հանձնաժողովներում տեղերը և մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ, նպատակաուղղված է մշտական հանձնաժողովներում խորհրդարանական մեծամասնության և փոքրամասնության՝ ընտրությունների արդյունքներով պայմանավորված անհրաժեշտ հարաբերակցության ապահովմանը, խորհրդարանական կյանքին ընդդիմության մասնակցության երաշխավորմանը, խորհրդարանական ուժերի հակակշռման համատեքստում նրա դերի բարձրացմանը:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կազմավորման **գործընթացի առաջին փուլում**, ելնելով խորհրդարանական ընտրությունների արդյունքներից՝ որոշվում է խորհրդարանի մշտական հանձնաժողովներում յուրաքանչյուր խմբակցությանը հատկացվող տեղերի քանակը, որի իրավակարգավորումների հիմքում դրված է մշտական հանձնաժողովներում տեղերի որոշման Կանոնակարգով սահմանված բանաձևը, ընդ որում՝ ամբողջական փուլային կառուցակարգում խորհրդարանի մշտական հանձնաժողովներում յուրաքանչյուր խմբակցությանը հատկացվող տեղերի քանակի որոշումը հանձնաժողովի կազմավորմանն ուղղված նախնական բնույթի իրավակիրառական գործընթաց է: Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասն այդ նախնական գործընթացն անվանում է *«մշտական հանձնաժողովներում տեղերի բաշխում»*: Ընդ որում՝ Կանոնակարգը փոքրամասնություն հանդիսացող խմբակցությունների համար սահմանում է լրացուցիչ երաշխիք՝ ըստ խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնության տեղերի բաշխման պահանջը տարածելով նաև հանձնաժողովների նախագահների տեղակալների վրա:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կազմավորման վերը նկարագրված գործընթացի տրամաբանությունից ելնելով՝ Կանոնակարգը, հիմք ընդունելով մշտական հանձնաժողովներում խմբակցությունների ունեցած տեղերի քանակն ըստ բանաձևի բաշխումը, սահմանում է խորհրդարանի մշտական հանձնաժողովների կազմավորման **երկրորդ փուլի** իրավակարգավորումները, մասնավորապես՝ տվյալ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները կոնկրետ պատգամավորներով համալրման կարգը՝ դրա հիմքում դնելով մշտական հանձնաժողովների անդամներին՝ խմբակցությունների կողմից **նշանակման սկզբունքը**. համաձայն Կանոնակարգի 11-րդ հոդվածի 2-3-րդ և 5-րդ մասերի՝ մշտական հանձնաժողովում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ, իսկ խմբակցության անդամը խմբակցությանը վերապահված հանձնաժողովի անդամի տեղում նշանակվում, ինչպես նաև հանձնաժողովի կազմից դուրս է գալիս խմբակցության որոշմամբ: Խմբակցությունն իրավունք ունի թափուր թողնելու հանձնաժողովում իրեն վերապահված տեղը, ինչպես նաև փոխելու հանձնաժողովի կազմում ընդգրկված իր անդամին:

Այսպիսով՝ մշտական հանձնաժողովների անհատականացված կազմը կամ կոնկրետ անդամներին, ըստ խմբակցությունների համար նախապես սահմանված տեղերի քանակի, ուղղակիորեն որոշում են խմբակցությունները, ուրեմն՝ Սահմանադրությամբ երաշխավորված է խորհրդարանական փոքրամասնության՝ մշտական հանձնաժողովներում անդամներ նշանակելու իրավունքը՝ առանց խորհրդարանի քաղաքական մեծամասնության որևէ կերպ արտահայտված համաձայնության կամ պարտադրանքի: Այս գործընթացի համար Կանոնակարգի սահմանած իրավակարգավորման համաձայն՝ մշտական հանձնաժողովի կազմը և դրանում փոփոխությունները հաստատում է Ազգային ժողովի նախագահը, եթե պահպանված են Կանոնակարգի 11-րդ հոդվածով սահմանված սկզբունքները (12-րդ հոդված, 1-ին մաս), ընդ որում՝ Ազգային ժողովի նախագահի այդ լիազորությունն ունի վավերացնող բնույթ:

Ճետևաբար՝ խորհրդարանի բոլոր, ներառյալ՝ փոքրամասնություն կազմող խմբակցությունների համար երաշխավորված են մշտական հանձնաժողովներում և՛ ներկայացվածության, և՛ դրանցում իրենց ներկայացուցիչների անհատական կազմը

(անդամներին) որոշելու իրավունքները: Վերջինիս երաշխիքը Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն է, ըստ որի՝ խմբակցությունն իրավունք ունի Կանոնակարգով սահմանված կարգով Ազգային ժողովի հանձնաժողովում իրեն վերապահված տեղում նշանակելու խմբակցության անդամի, ինչպես նաև փոխելու նրան:

Մշտական հանձնաժողովին անդամակցությունը բխում է պատգամավորների կարգավիճակից, համարվում է պատգամավորական մանդատի իրացման ձևերից մեկը, որը, ի թիվս այլնի, ներառում է նաև խորհրդարանական հանձնաժողովներում վերջիններիս կողմից ծավալվող գործունեությանն առնչվող իրավունքներն ու պարտականությունները: Ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ այդ իրավակարգավորումների համաձայն, ի թիվս այլնի, պատգամավորը պարտավոր է ընդգրկվել մեկ մշտական հանձնաժողովի կազմում:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կազմավորման **երրորդ փուլում** տեղի են ունենում մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրությունները: Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «իրեն վերապահված պաշտոնում թեկնածու առաջադրելու» խմբակցության իրավունքը մասամբ, ինչպես նաև 138-րդ հոդվածի «մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրությունները» ձևակերպումը վերաբերում են Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կազմավորման այս փուլին, որի՝ որպես գործընթացի կարգավորման հիմքում Կանոնակարգը դրել է **ընտրովիության սկզբունքը**. մշտական հանձնաժողովների նախագահների ընտրությունը կատարվում է Ազգային ժողովի նիստում՝ Կանոնակարգի 135-րդ հոդվածով սահմանված կարգով, իսկ մշտական հանձնաժողովի նախագահների տեղակալների ընտրությունը կատարվում է հանձնաժողովում՝ դրա անդամների կողմից՝ պահպանելով Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա՝ Կանոնակարգով սահմանված ու իրականացված մշտական հանձնաժողովներում խմբակցությունների միջև տեղերի և մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխման համամասնությունները: Ընդ որում՝ Կանոնակարգը մշտական հանձնաժողովների նախագահների տեղակալների պաշտոնների համար ևս սահմանում է ըստ համամասնության խմբակցությունների միջև բաշխման կարգ:

Դիմողի դիրքորոշումներից պարզ է դառնում, որ վերջինիս համար սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց է առավելապես մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պաշտոնների զբաղեցման ընտրովիության կարգը, հետևաբար՝ Կանոնակարգի 138-րդ հոդվածում ամրագրված ընթացակարգային կարգավորումները սահմանադրականության տեսանկյունից Դիմողի համար խնդրահարույց են այնքանով, որքանով ուղղված են մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի ընտրությունների կարգավորմանը:

Կանոնակարգը խորհրդարանի մշտական հանձնաժողովների կազմավորման գործընթացի վերոբերյալ իրավակարգավորումները սահմանելիս որդեգրել է տարբեր կարգեր (սկզբունքներ)՝ խորհրդարանական ընտրությունների արդյունքներով հանձնաժողովում տեղերի բաշխման, հանձնաժողովի անդամներին խմբակցության կողմից նշանակման, հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների՝ խմբակցությունների միջև բաշխման, Ազգային ժողովում՝ մշտական հանձնաժողովների նախագահների, իսկ հանձնաժողովներում նրանց տեղակալների ընտրության:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կազմավորման գործընթացը կարգավորող վերոբերյալ իրավադրույթներից Սահմանադրությունն ուղղակի ամրագրել է միայն այն, որ մշտական հանձնաժողովներում տեղերը, ինչպես նաև դրանց նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Խմբակցությունների միջև մշտական հանձնաժողովներում տեղերի բաշխման կարգի սահմանադրական իրավադրույթներից, ինչպես նաև մշտական հանձնաժողովների կազմավորման մի շարք առանձնահատկություններից (հատկապես որ պատգամավորը պարտավոր է ընդգրկվել մեկ մշտական հանձնաժողովի կազմում) տրամաբանորեն բխում է, որ մշտական հանձնաժողովի անհատական կազմի համալրման արդյունավետ և հարմար սկզբունքը խմբակցության կողմից նշանակումն է, որովհետև բոլոր պատգամավորները պետք է ընդգրկված լինեն գոնե մեկ մշտական հանձնաժողովի կազմում:

Մեր գնահատմամբ՝ մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնակալման կարգի վերաբերյալ Սահմանադրությունից չի բխում որևէ նույնիսկ անուղղակի ենթադրություն, որ դրա հիմքում պետք է անպայման դրվի խմբակցության կողմից նշանակման սկզբունքը: Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կազմի, դրանց նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների համատեքստում Սահմանադրությունը պարտադիր է համարում միայն մշտական հանձնաժողովներում խմբակցությունների միջև տեղերի, ինչպես նաև հանձնաժողովների նախագահների պաշտոնների՝ խմբակցությունների միջև համամասնորեն բաշխումը: Հետևաբար՝ Կանոնակարգի 138-րդ հոդվածում ամրագրված՝ մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների համալրման կարգը՝ կառուցված ընտրովիության սկզբունքի վրա, չի կարող հակասել Սահմանադրությանը:

Այս համատեքստում անդրադառնալով Դիմողի կողմից բարձրացված մշտական հանձնաժողովների անհատական կազմի համալրման՝ մի կողմից, և դրանց նախագահների ու տեղակալների ընտրության կարգերի՝ մյուս կողմից, տարբերակման խնդրին, գտնում ենք, որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրովիության սկզբունքն արտառոց իրավակարգավորում չէ: Կանոնակարգի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Ազգային ժողովի մարմինների կազմավորման հարաբերությունների կարգավորման համար օրենսդիրը որդեգրել է տարբեր սկզբունքներ, ինչի արդյունքում Կանոնակարգում առկա են Ազգային ժողովի մարմինների կազմավորման տարբերակված կառուցակարգեր, մասնավորապես՝ **ընտրովի** (Ազգային ժողովի նախագահ, նրա տեղակալներ), **նշանակովի** (քննիչ հանձնաժողովի նախագահ և անդամներ), ի պաշտոնե **ներկայացուցչական** (Ազգային ժողովի խորհուրդ), **նշանակովի-ընտրովի** կամ **խառը** (մշտական հանձնաժողովներ):

Կանոնակարգը խորհրդարանի մշտական հանձնաժողովների կազմավորման գործընթացի հերթական փուլերի իրավակարգավորումները սահմանելիս որդեգրել է տարբեր սկզբունքներ՝ ընտրությունների արդյունքներով տեղերի **նախնական բաշխման, խմբակցության կողմից նշանակման, ներհանձնաժողովային ընտրու-**



**թյան:** Այդ գործընթացին վերաբերող կարգավորիչ իրավադրույթներից Սահմանադրությունն ուղղակի ամրագրմամբ բարձրագույն ուժ է տվել միայն մշտական հանձնաժողովներում տեղերի բաշխման և դրանց նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխման կարգերին: Խմբակցություններում տեղերի բաշխման կարգի սահմանադրական իրավադրույթներից, ինչպես նաև մշտական հանձնաժողովների կազմավորման մի շարք առանձնահատկություններից ելնելով՝ տրամաբանորեն հնարավոր է բխեցնել, որ բաշխման գործընթացին հաջորդող փուլի՝ հանձնաժողովի անհատական կազմի համալրման իրավակարգավորիչ սկզբունքը խմբակցության կողմից նշանակումն է: Եթե խորհրդարանի մշտական հանձնաժողովների կազմավորման գործընթացի անհատական կազմի համալրման փուլի համար անուղղակիորեն կարող ենք անել նման եզրահանգում, ապա երրորդ փուլի՝ մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնակալման կարգի վերաբերյալ Սահմանադրությունից չի բխում անուղղակի որևէ ենթադրություն, որ դրա հիմքում պետք է անպայման դրվի խմբակցության կողմից նշանակման սկզբունքը: Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնակալման ընտրովիության կարգի փոխարեն օրենսդիրը կարող էր սահմանել նաև խմբակցության կողմից նշանակովի ներկայացուցչական կարգը, քանի որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների ստանձնման մասին Սահմանադրությունը տառացիորեն որևէ որոշակի/ուղղակի դրույթ չի ամրագրում: Սահմանադրությունը պարտադիր է համարում միայն մշտական հանձնաժողովներում խմբակցությունների միջև տեղերի, ինչպես նաև հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխելը:

Այս հանգամանքը նկատի ունենալով՝ գտնում ենք, որ խնդրո առարկա պաշտոնների զբաղեցման կարգի սահմանումը՝ Սահմանադրությամբ ամրագրված հիմնադրույթների, այն է՝ տեղերի բաշխման կարգի շրջանակում, գտնվում է օրենսդիր իշխանության իրավասության ոլորտում: Օրենսդիրն այստեղ ունի հայեցողության ազատություն՝ երկու այլընտրանքների միջև՝ որդեգրել կա՛մ նշանակովիության, կա՛մ ընտրովիության սկզբունքը: Սահմանադրական օրենքի գործող

իրավակարգավորումներով օրենսդիրը ներկա պահին առավել նպատակահարմար է գտել Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրության, քան նշանակման կարգը՝ հաշվի առնելով ընտրությունների որոշակի առավելությունները՝ գործընթացի հրապարակայնությունը, թափանցիկությունը, թեկնածուի որակների մասին ընտրողների և պատգամավորների մոտ պատկերացումների ձևավորումը, իր լիազորություններն իրականացնելիս ընտրվողի հաշվետվողականությունն ընտրողների առջև և այլն:

Հիմք ընդունելով վերոբերյալ հիմնավորումները՝ գտնում ենք, որ Կանոնակարգի 138-րդ հոդվածում ամրագրված՝ մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների համալրման կարգը՝ կառուցված ընտրովիության սկզբունքի վրա, համապատասխանում է Սահմանադրությանը՝ հիմք ընդունելով նաև այն, որ հնարավոր թեկնածուների տվյալ հանձնաժողովի կազմում ընդգրկվելու ընթացակարգի հիմքում ի վերջո ընկած է խմբակցության կողմից ըստ նախապես բաշխված համամասնության նշանակման կարգը:

Շեղանակաբար՝ ակնհայտ է, որ Կանոնակարգի 138-րդ հոդվածի 1-ին, 2-11-րդ, 1.1-ին մասերում ամրագրված՝ մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների համալրման կարգը՝ կառուցված ընտրովիության սկզբունքի վրա, համահունչ է Սահմանադրությանը և համապատասխանում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին:

### **Եզրակացություններ**

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը, այն մեկնաբանությամբ, որ իրավասու խմբակցության կողմից իրեն վերապահված մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար թեկնածու առաջադրելը բացառապես իրավունք է, որի իրականացումից հրաժարվելը կամ առաջադրված թեկնածուների պարբերական հրաժարականը կարող է հանգեցնել Ազգային ժողովի խմբակցության այդ իրավունքի՝ օրենքով սահմանված սահմանափակման՝ մշտական հանձնաժողովի անխափան և անընդհատ գործունեության ապահովման համար:

2. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 12-րդ մասն այնքանով, որքանով նախատեսում է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի թեկնածու առաջադրելու իրավունքի փոխանցում խմբակցությունների գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը, համապատասխանում է Սահմանադրությանը՝ սույն հատուկ կարծիքի մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակում:

3. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 1-ին, 2-11-րդ, 1.1-ին մասերը համապատասխանում են Սահմանադրությանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ



Ա. ՎԱՆԱՐՇՅԱՆ

29 դեկտեմբերի 2023 թվականի